

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 14/3

քսաներկուսը դեկտեմբերի 2011 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2003Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 30-րդ կետի 1-ին ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի ռեկտորատի կանոնակարգը (նոր խմբագրությամբ)՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել 2003թ. նոյեմբերի 20-ին Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի ռեկտորատի կանոնակարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ՝

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2011 թ. դեկտեմբերի 22-ի նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Ա. Յ. Սիմոնյան

«22» դեկտեմբերի 2011թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՐԱՏԻ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) ռեկտորատի (այսուհետ՝ ռեկտորատ) կարգավիճակը, իրավասությունը, ռեկտորատի նիստերի նախապատրաստման և անցկացման ընթացակարգը:

2. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են գիտական խորհրդի կողմից:

II. ՌԵԿՏՐԱՏԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

3. Ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է ռեկտորի հրամանով:

4. Ռեկտորատը, ԵՊՀ ռեկտորին կանոնադրությամբ վերապահված իրավասության շրջանակներում, քննարկում է ԵՊՀ գործունեությանը վերաբերող հարցեր:

5. Ռեկտորատի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, ռեկտորի կողմից սահմանված ժամկետներում և օրակարգով:

III. ՌԵԿՏՐԱՏԻ ԿԱԶՄԸ

6. Ռեկտորատի կազմի մեջ մտնում են ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, ռեկտորի աշխատակազմի ղեկավարը, արհեստակցական կազմակերպության նախագահը, պրոռեկտորների տեղակալները, վարչությունների պետերը, մասնաճյուղերի տնօրենները, ֆակուլտետների ղեկանները, համահամալսարանական ամբիոնների վարիչները, գլխավոր հաշվապահը, գրադարանի տնօրենը, իրավաբանական բաժնի պետը, կադրերի բաժնի վարիչը, գիտակազմակերպչական բաժնի վարիչը, ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի վարիչը, կրթական գործունեություն իրականացնող կենտրոնների տնօրենները և ուսանողական խորհրդի նախագահը:

7. Ռեկտորի հրավերով ռեկտորատի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կարող են մասնակցել համապատասխան կարգավիճակ և որակավորում ունեցող մասնագետներ:

IV. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՐ

8. Ռեկտորատի նիստերը նախագահում է ռեկտորը:

9. Ռեկտորը, բացելով ռեկտորատի նիստը, հայտարարում է նիստի օրակարգը, սահմանում օրակարգի հարցերի քննարկման ընթացակարգը և հաջորդականությունը:

10. Ռեկտորատում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

V. ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

11. Ռեկտորատի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ և կարող են դրվել ռեկտորի կողմից կայացվող որոշումների հիմքում:

VI. ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

12. Ռեկտորատի նիստերն արձանագրվում են: Արձանագրության վարումը կազմակերպում է գիտական քարտուղարը:

13. Ռեկտորատի նիստերի արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ամսաթիվը, նիստին ներկա անձանց անվանացանկը, նիստի օրակարգը, օրակարգի հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները:

14. Ռեկտորատի նիստերի արձանագրությունները ստորագրում են ռեկտորը և գիտական քարտուղարը: